

ՄԱՐԻԱՄ ԱՍՐԻՅԱՆ

Շրջափակում

Քսանհինգ տարեկանում, երբ կյանքն այլևս անհիմաստ ու անհետաքրքիր էր թվում, շարունակ մտածում էի ինքնասպանության մասին:

Դեռ շատ առաջ սպանության միտքն ինձ հաճախ հանգիստ չէր տալիս: Բայց այն ժամանակ թիրախի դերում ուրիշներն էին, ասենք՝ ինձ ոչ մի կերպ չհարգող ուսուցչուհիս, հորս հեզությունը ծաղրող հարևանները, գեղեցկուհի դասընկերուհիս, որին սիրահարված էր ամբողջ դասարանը, և այսօրինակ մի շարք մարդիկ: Սպանության բոլոր ցանկությունները ծնվել էին ոչ միանգամից՝ սկզբում անհաջող էին ընթացել հարցերը պարզելու հանգիստ բանակցությունները, հետո խնորվել ու լճացել էր նշված մարդկանց ցավ պատճառելու անզուսպ ցանկությունը, որից բխել էր անօգնական ատելությունը, և հանգեցրել ամենափրկիչ, կոնկրետ լուծմանը՝ սպանության մտքին: Բնավորությանս ամրապնդվելուն զուգահեռ սպանության ցանկությունը կորցրեց գայթակղիչ փայլն ու քայքայվեց:

Ինքնասպանության ցանկությունը շատ ավելի վաղուց էր ինձ անհանգստացնում, բայց այն խորամանկ խաղ էր հետապնդում,- մահվանից այն կողմը տեսնելը՝ անպայման ետ վերադառնալու ակնկալիքով: Եվ երբ մի օր՝ մոտ երկու տարի առաջ ես եռապատվեցի ու զգացի մահվանից այն կողմի անբարբառելի անդորրն ու հմայքը, խորամանկ խաղի պահանջն այլևս կորավ, ու սկիզբ առավ տիեզերական լուսավոր կարոտը:

Եվ երբ հոգնել էի կյանքից, մարդկանցից ու ինձանից, ու լուսավոր կարոտը շրջափակել էր շնչուղիներս ու միտքս,- մի գիշեր կտրեցի զարկերակս: Կտրեցի ու հիշեցի հրաժեշտի մասին: Ստա ծնողներիս սենյակ: Մթության մեջ չտեսա նրանց դեմքերը,- կարճ ակնթարթ ունկնդրեցի ինձ ստեղծողների համառ, կյանքը սիրող շնչանվազն ու մնալով այն համոզմունքին, որ իմ անձնական և այլ երջանկության համար նրանք մտահոգվում էին այլևս ինձ պես հսկայական հոգս ու ծնողական խղճի պարտավորություններ չունենալու համար, զգույշ համբուրեցի նրանց ու զնացի հրաժեշտ տալու քրոջս: Նրան էլ համբուրեցի՝ լուռ մաղթանքով, որ երբեք չտանջվի կյանքի ու մահվան սահմանագիծը խախտելու գայթակղությունից: Հետո հագա աշնանային վերարկուս, կիսակոշիկներս, ու դուրս եկա տանից՝ հրաժեշտի խոսք ասելու քաղաքի հեռավոր ծայրում գտնվող այն բնակարանի դռանը, որտեղ ապրում էր ինձ սիրելու ցնորքով կախարդված երիտասարդը:

Տեղ հասնելով, կիսաձայն մենախոսություն կարդացի, ասելով, որ բյուրեղից ու ադամանդից ու կյանքի շա՛տ բարիքներից թանկ են գնահատում իր սերը, սակայն նման թանկարժեք ընծա ընդունելու սիրտ ու հավատ չի թողել ինձ կյանքը, որ սիրում են իրեն՝ ինչպես բոլորին, բայց ավելի բուռն, որովհետև հավասարաչափ կրում է ինձ բացահայտելու ցավը: Ու ասում են՝ այստեղ են, քո դռանը, ես գիտեմ, որ մի օր մարմինդ հոգնելու է իմ մարմնից ու ցանկալու է տաք, թարմ արյան, որովհետև ոսկորներդ կարոտելու են հեռացող երիտասարդությանդ ավյունին,- և հոգունդ հանգչելու է հագուս վառած խարույկը: Ասում են՝ անհաստատ է քո սերը, քանի դեռ չի կորցրել ու գտել ինձ: Ու երբ կորցնես ու այլևս չցանկաս գտնել ինձ, ես կզրկվեմ ոչ թե քեզանից, և ո՛չ թե կտառապեմ լքվածության բարդությից, այլ կբռնամ այս կյանքի լպիրշ օրենսդրությանը բախվելու պարտադրանքից, - և այդ ժամանակ միգուցե ցանկամ ապրել երկար՝ ցինիկ այդ դեմքը դիմազրկելու ինքնախոստմամբ:

Հրաժեշտ տալով նրան էլ, իջա փողոց՝ անտարբեր նայելով աշխարհի դեմքին, որն այլևս անզոր էր պահել ինձ հետաքրքիր թվացող զարմանալիությամբ: Անցա աղբարկղը հոտոտող մուրացիկի կողքով, ասելով,- ես չեմ կարող որևէ կերպ օգնել քեզ, ո՛չ էլ քաղցից գողություն ու կողոպուտ անողին, ո՛չ էլ ցինիկ մարմնավաճառին ու սեռը փոխած անզորին, ո՛չ երկրի ղեկավարի դերում հայտնված ճակատագրի խաղաքարերին, ո՛չ էլ նրանց, ովքեր պատերազմների ու դժբախտ պատահարների սպանդանոցի անկամ այցելուներն են: Ես բոլորիդ կերպարն կերպարն ունեմ իմ մեջ, նույնիսկ սեռը փոխած տարաբախտի, որն իր գործողությունների ու ցանկությունների մեջ անմեղ է իր տեսակին դեմ չկանգնելու ազնվությամբ: Ես սիրում եմ բոլորիդ, որովհետև դուք իմ մեջ եք, և ես սիրում եմ այլևս անպաշտպան, հոգնած ու աշխարհից հաղթված տխրահռչակ իմ անձը: Ես պայքարի ուժ ու զենք չունեմ, նույնիսկ սովահար չեմ, որ կյանքից գազանաբար կառչելու զորություն գտնեմ:

Աղբարկղի մոտ կանգնածը լուռ ու անտարբեր շարունակում էր փնտրտուքը: Շարունակեցի ճանապարհս, փողոցը դատարկ էր: Թիկունքիս, գլխիս, ձեռքերիս բութ հարվածներ զգացի: Նայեցի շուրջս՝ կենդանի շունչ չկար: Փակեցի աչքերս՝ եռանդս վերագտնելու ու ճանապարհս շարունակելու համար, և անբացատրելի տեսողությամբ մուտք գործեցի գիշերային կյանք, որտեղ մարդիկ ապրում էին փակ աչքերով ու զբաղվում այն ամենով, ինչի մասին երազում կամ երևակայում էին ցերեկը: Փորձեցի կանգնեցնել մեկին ու ճշտել երկրորդ տեսողությանս իրավացիությունը: Նա չկանգնեց, չկանգնեց և՛ երկրորդ անցորդը, հինգերորդը, քսանութերորդը: Համընդհանուր քաոսում մարդիկ անընդհատ բախվում էին

միմյանց, ընկնում, արագ ոտքի կանգնում, ու կարծես ոչինչ էլ չի եղել՝
շարունակում էին ճանապարհը: Խոսք ու զրույց չկար: Քաղաքն ապրում էր
անձայն, մարդիկ այսուհետ քնելու կամ վաղուց արդեն քնում էին ոտքի վրա,-
անկողնում թողնելով իրենց անպաշտպան ստվերները: Մեկին բռնի կանգնեցրի ու
ասացի, որ մահվանից այն կողմի ճանապարհորդ եմ, և պահանջեցի բացատրել
զարմանքի իմ վերջին բաժնի՝ քնի մեջ շարժվող կամ քնելով ապրող մարդկանց
հանելուկը: Իմ ձայնից նա բացեց աչքերն ու աներևութացավ: Այդպես եղավ և
երկրորդի, հիգերորդի, քսանութերորդի դեպքում, նրանցից ոչ մեկը չկամեցավ կամ
չկարողացավ կիսել ինձ հետ երջանկության իր բաժինը՝ իր ծածուկ կյանքի
գաղտնիքը: Գիշերային քաղաքի անցորդների անտարբերությունից
նյարդայնացած՝ անուժ ու ողորմելի ծվծվացի.

- Իսկ ես կիսում էի բոլորիդ ցավը, մարդ լինելու անշրջանցելի
տառապանքը...

Վազքով հայտնված փոքրիկ մի տղա ընդհատեց բողոք-մենախոսությունս:

- Բա՛րև,- զիլ ձայնով ճչաց նա ու վազքով էլ անհետացավ:

Նրա ձայնից բացեցի աչքերս ու տեսա քրոջս, որը բարևող հրաշամանուկի
ձայնով աղերսում էր,- Բա՛ց աչքերդ: Հրաշամանուկի դեմքը չէի հասցրել տեսնել,
բայց թվաց, թե նա է նայում քրոջս աչքերով ու սեղմում ձեռքս: Ջարկերակս ցավոտ
տնքում էր՝ հիշեցնելով բարևի պարտավորվածության մասին: Շուրթերիս անուժ
շարժումներից բարևս աղավաղվեց, բայց զգացի, թե ինչպես է չորացած
կոկորդիցս ներս ծորում ծածուկ երջանկության համն ու ազատագրում
շնչուղիներս ու միտքս տիեզերական կարոտի լուսախեղդ շրջափակումից: